

Խալուհի Մովսիսյան

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների
դատախազության ավագ դատախազ

ԱՊԱՑՈՒՑՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ¹

Համառոտագիր

Սույն աշխատանքում վերլուծության է ենթարկվել քրեական դատավարությունում ապացուցման սահմանների և ապացույցների բավարարության հասկացությունը՝ հիմնվելով քրեական դատավարության օրենսդրության, ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային դիրքորոշումների և արդար դատաքննության սկզբունքների վրա: Ապացուցման սահմանները որոշում են, թե ինչ հանգամանքներ պետք է պարզվեն տվյալ գործով և ինչ ծավալի ապացույցներ պետք է հավաքվեն այդ հանգամանքները հիմնավորելու համար: Ապացույցների բավարարության չափանիշները, իրենց հերթին, պայմանավորում են, թե արդյոք տվյալ հանգամանքը համարվում է ապացուցված՝ հիմնավոր կասկածից վեր մակարդակով: Վճռաբեկ դատարանը ապացույցների բավարարության գնահատման համար ձևավորել է երեք առանցքային չափանիշ՝ անմեղության կանխավարկած, ներքին համոզմունք և դատավարական որոշումների հիմնավորվածություն: Աշխատությունը կարևորում է այս չափանիշների փոխկապակցվածությունը և բացահայտում է, որ քրեական գործի լուծման համար անհրաժեշտ է թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների այնպիսի համակցություն, որը կհաղթահարի անմեղության կանխավարկածը և կապահովի արդար դատաքննության իրավունքի իրականացումը:

Այս աշխատանքը նպատակ ունի խորությամբ ուսումնասիրել ապացուցման սահմանների և ապացույցների բավարարության խնդիրները՝ միաժամանակ դիտարկելով նաև ապացույցների վերաբերելիության, արժանահավատության և թույլատրելիության հարցերը: Ուսումնասիրության հիմքում դրված են ինչպես իրավական տեսության կարևոր հարցադրումները, այնպես էլ Վճռաբեկ դատարանի պրակտիկան և գործող օրենսդրական դրույթները: Վերջնական նպատակը գործնականում կիրառելի չափորոշիչների մշակումն է, որոնք կնպաստեն արդար, հիմնավոր և վստահություն ներշնչող դատական որոշումների կայացմանը:

Հիմնաբառեր- ապացուցում, օբյեկտիվ ճշմարտություն, դատավարական ճշմարտություն, ապացուցման տարրեր, ապացուցման փուլեր, ապացուցման նպատակ, ապացուցման առարկա:

¹ Հոդվածը ներկայացվել է 05.05.2025թ., գրախոսվել է 05.06.2025թ.:

Ներածություն

Քրեական դատավարության արդյունավետությունը մեծապես կախված է նրանից, թե ինչպես է կազմակերպվում ապացուցման գործընթացը: Անհրաժեշտ է, որպեսզի դատավարության բոլոր փուլերում պահպանվեն հիմնարար սկզբունքները, որոնք թույլ են տալիս հասնել արդար և հիմնավորված վճռի: Ապացուցման սահմանների հստակեցումը և ապացույցների բավարարության չափորոշիչների ճշգրտումը ոչ միայն նպաստում են դատավարական որոշումների օրինակականությանը, այլև ապահովում են մարդու իրավունքների լիարժեք պաշտպանություն՝ ինչպես Սահմանադրությամբ, այնպես էլ միջազգային պարտավորություններով ամրագրված:

Այսօր, երբ Հայաստանի իրավական համակարգը շարունակում է զարգանալ և ենթարկվում է բարեփոխումների, արդիական է դառնում դատավարության մեջ ապացուցման որակի բարձրացման խնդիրը: Մեծապես կարևոր է, որ դատական համակարգը գործի այնպես, որ քաղաքացին վստահ լինի՝ արդարությունը հնարավոր է: Այդ առումով հատկապես ուշադրավ է ապացուցման սահմանների և բավարարության ինստիտուտների վերլուծությունը՝ հաշվի առնելով Վճռաբեկ դատարանի նախադեպերը, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշները:

Ապացուցման սահմանները հստակեցնելուց է կախված, թե կոնկրետ քրեական գործի շրջանակում ի՞նչ հարցեր պետք է պարզվեն: Դրանք կարող են վերաբերել հանցանքի առկայությանը, մեղավորի ինքնությանը, պատասխանատվությունը բացառող հանգամանքներին և այլ կարևոր հանգամանքների: Այս սահմաններն ուղղակիորեն ազդում են ապացույցների հավաքման և գնահատման գործընթացի վրա: Միևնույն ժամանակ, բավարարության չափանիշների սահմանումը թույլ է տալիս հասկանալ, թե երբ կարող ենք համարել, որ տվյալ գործով ներկայացված ապացույցները բավարար են՝ որոշում կայացնելու համար:

Այս ուղղությամբ կարևոր դեր ունեն Վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված մոտեցումները: Դրանց համաձայն՝ բավարար ապացույցների առկայությունը ենթադրում է անմեղության կանխավարկածի հաղթահարում, օբյեկտիվ փաստերի վրա հիմնված ներքին համոզմունքի ձևավորում, ինչպես նաև՝ որոշման հիմնավոր ներկայացում: Այս սկզբունքները վերջին տարիներին նաև օրենսդրական մակարդակով են ամրագրվել, ինչը վկայում է դատական պրակտիկայի՝ օրենսդրության վրա նշանակալի ազդեցության մասին:

§1 Ապացուցման նպատակը և տարրերը

Ապացուցումը դատավարության նպատակների, մասնավորապես՝ տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, ինչպես նաև անձի իրավունքների ու ազատությունների ապօրինի սահմանափակումն ու չկատարած հանցանքի համար վերջինիս քրեական պատասխանատվության ենթարկելը կանխելու իրագործման միակ միջոցն է: Այդ իսկ պատճառով ապացուցումը եղել է և մնում է քրեական դատավարության հիմնական օղակը:

Քննարկվող ինստիտուտի առաջին տարրը համարվում է ապացույցների և դրանց աղբյուրների հավաքումը: Դրա տակ մտնում են յուրաքանչյուր քննչական վարկածով ապացույցների և դրանց աղբյուրների պարզումը, հավաքումը և դատավարական ամրագրումը: Քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված կոնկրետ դատավարական գործողությունները համակցության մեջ ապահովում են քրեական գործի համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների և դրանց աղբյուրների լիակատար պարզում, ստացում և դատավարական ամրագրում:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հաճախ վարույթն իրականացնող մարմինների կողմից ապացույցների հավաքման փուլում ակնհայտորեն անտեսվում են օրենքով վերջիններիս լիազորված գործողությունների իրականացման դատավարական կարգը կանոնակարգող օրենսդրական պահանջները, ինչը հանգեցնում է ոչ միայն կատարված քննչական կամ դատավարական գործողության արդյունքում ստացված տվյալների անթույլատրելիության, այլև անձանց իրավունքների և օրինական շահերի ոտնահարման:

Ստորև փորձենք վերլուծել ապացուցման հետ կապված պրակտիկայում հանդիպող որոշ խնդիրներ: Այսպես, խուզարկության հետ կապված հետաքրքրություն է ներկայացնում պրակտիկայից մի իրավիճակ²: Այսպես, վարույթն իրականացնող քննիչի միջնորդությունը՝ «X» ընկերության տարածքում խուզարկության թույլտվություն ստանալու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանը բավարարում է: Դրանից հետո քննիչը խուզարկություն է կատարում ոչ միայն «X» ընկերության տարածքում, այլ նաև այդ ընկերության հետ փոխկապակցված «Y» և «Z» ընկերությունների տարածքներում: «Y» և «Z» ընկերությունների ներկայացուցիչները քննիչի գործողությունները բողոքարկում են Վերաքննիչ դատարան, ինչի արդյունքում Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ առաջին ատյանի դատարանը թույլատրել է իրականացնել խուզարկություն բացառապես «X» ընկերության համապատասխան տարածքներում, իսկ «Y» և «Z» ընկերություններում խուզարկություն կատարելու մասին խոսք չկա, հետևաբար՝ այդ ընկերություններում կատարված խուզարկությունների մասով ըստ էության քննիչը դուրս է եկել դատարանի որոշմամբ արձանագրած սահմաններից և իրականացրել է խուզարկություն այնպիսի տարածքներում, որոնց վերաբերյալ դատարանի որոշում չի եղել:

Վերաքննիչ դատարանի կողմից կատարված խուզարկությունն անթույլատրելի ճանաչելուց հետո քննիչը կազմել է համապատասխան ընդունման-հանձնման ակտ, ըստ որի «X», «Y» և «Z» ընկերություններից խուզարկությամբ առգրավված փաստաթղթերը հետ է վերադարձրել վերջիններիս ներկայացուցչին և նույն օրը կազմել է առգրավում կատարելու մասին արձանագրություն, որով առգրավել է ներկայացուցչի մոտ գտնվող, քննիչի կողմից հետ հանձնած ընկերությունների վերաբերվող նույն բոլոր փաստաթղթերը, որոնք նախկինում առգրավված էին եղել դատարանի անօրինական որոշման հիման վրա: Այսինքն՝ փաստացի

²Քրեական վարույթն ավարտվել է նախաքննության փուլում, հետևաբար հղում տալ հնարավոր չէ:

նախաքննական մարմինն անօրինական խուզարկության հետևանքով առգրավված փաստաթղթերը կրկին առգրավել է:

Նշվածի համատեքստում անդրադառնանք «թունավոր ծառի պտուղները թունավոր են» տեսությանը, որն ապացույցի անթույլատրելիության ինստիտուտի շրջանակներում առանցքային նշանակություն ունի: Այդ տեսության համաձայն՝ օրենքի խախտմամբ ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա ստացված ապացույցները նույնպես անթույլատրելի են: ՀՀ Վճռաբեկ դատարանն այս կանոնին անդրադարձել է Ժ.Սեֆիլյանի գործով որոշման մեջ, որտեղ հստակեցրել է «թունավորված ծառի պտուղների» տեսության «բխելու» և «պատճառական կապի» չափանիշները: «Բխելու» չափանիշն առկա է այն դեպքում, երբ ապացույցն անմիջականորեն բխել է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցից: «Պատճառական կապի» չափանիշը նշանակում է, որ անգամ անօրինական ճանապարհով ստացված տվյալի վրա ամբողջությամբ հիմնված (դրանից բխած) ապացույցն անթույլատրելի ճանաչելու համար անհրաժեշտ է, որ բացակայի ողջամիտ ջանքերով այդ ապացույցն ստանալու հնարավորությունը:

ՀՀ Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով «բխելու» չափանիշը, արձանագրել է, որ ՄԻԵԿ 8-րդ հոդվածի պահանջներին հակասող ճանաչված միջամտության, այն է՝ Ժ.Սեֆիլյանի հեռախոսային խոսակցությունների և այլ հաղորդումների գաղտնալսման արդյունքում ձեռք բերված տեղեկությունները ո'չ քրեական գործ հարուցելու մասին որոշման և ո'չ խուզարկություն կատարելու համար թույլտվություն ստանալու միջնորդությունների և դրանք բավարարելու մասին որոշումների հիմքում չեն դրվել: Այսինքն՝ քննարկվող դատավարական որոշումները կայացվել են այնպիսի տեղեկությունների հիման վրա, որոնք ստացվել են Եվրոպական կոնվենցիայի պահանջներին չհամապատասխանող գործողություններից անկախ՝ դրանց հետ առնչություն չունեցող աղբյուրից, իսկ Ժ.Սեֆիլյանի բնակարանում և աշխատավայրում խուզարկություններն իրականացվել և դրանց արձանագրությունները կազմվել են օրենքով սահմանված կարգի պահպանմամբ:

Ներկայացված գործի համատեքստում գտնում ենք, որ վերաքննիչ դատարանի որոշումից հետո քննիչը պարտավոր էր խուզարկությամբ առգրավված ամբողջ փաստաթղթերը վերադարձնել ընկերություններին, ընդ որում, այնտեղ, որտեղից դրանք առգրավվել էին, սակայն քննիչը քննչական բաժնում ներկայացուցչի ստորագրմանն է ներկայացրել համապատասխան ընդունման-հանձնման ակտ, որից հետո նույն պահին ներկայացվել է առգրավում կատարելու արձանագրությունը, որով արդեն առգրավվել է ընկերությունների փաստաթղթերը: Նախաքննական մարմնի անօրինական գործողությունների հետևանքով փաստացի չի կատարվել վերաքննիչ դատարանի որոշումը և խուզարկությամբ առգրավված փաստաթղթերը շարունակաբար գտնվել են նախաքննական մարմնի տրամադրության տակ:

Այսինքն՝ ներկայացված գործում վարույթն իրականացնող մարմինը կատարված և ոչ իրավաչափ ճանաչված խուզարկության արդյունքում առգրավել է փաստաթղթեր, որոնց մասին որևէ տեղեկատվության մինչև այդ չի տիրապետել:

Դրանից հետո վարույթն իրականացնող մարմինը, պարտավորված լինելով վերադարձնել ոչ իրավաչափ ճանաչված խուզարկությանը վերցված փաստաթղթերը, ըստ էության կատարել է այդ պարտականությունը: Միևնույն ժամանակ այդ գործողության կատարումից անմիջապես հետո վարույթն իրականացնող մարմինն առանձին որոշմամբ ձեռնամուխ է եղել այդ նույն փաստաթղթերն առգրավելուն:

Գտնում ենք, որ փաստաթղթերը վերադարձնելուց անմիջապես հետո դրանց առգրավումն ըստ էության ձևական բնույթ է կրել, քանի որ վարույթն իրականացնող մարմինը փորձել է իրավաչափ տեսք հաղորդել ի սկզբանե ոչ իրավաչափ միջամտության՝ խուզարկության արդյունքում ձեռք բերված փաստաթղթերին հասանելի դառնալու գործընթացին: Այդ հետևությունը պայմանավորված է նրանով, որ այդ փաստաթղթերն ի սկզբանե ձեռք են բերվել քննչական գործողության՝ խուզարկության կատարման կարգի էական խախտմամբ, ինչպես նաև այն կարևոր հանգամանքով, որ առգրավված փաստաթղթերի մասին վարույթն իրականացնող մարմինը որևէ այլ կերպ չէր կարող տեղեկանալ, բացառությամբ կատարված խուզարկության, որը ճանաչվել է ոչ իրավաչափ: Այսինքն՝ «թունավոր ծառի պտուղները ևս թունավոր են» սկզբունքն այս իրավիճակում ուղղակիորեն կարող է գործել:

Ապացուցման ևս մեկ հիմնախնդրի անդրադառնանք թիվ ԵԱՆԴ/0089/01/17 քրեական գործի շրջանակներում: Գործի նախաքննության ընթացքում կատարվել է դեպքի վայրի զննություն, որի արձանագրության մեջ նշված է, որ «դեպքի վայրի զննության պահին հյուրասենյակի պատուհանները ծածկված են թափանցիկ վարագույրներով, որոնք նույն վարագույրով ծածկված են եղել նաև դեպքի օրը: Յ.Աղաջանյանի համաձայնությամբ վերջինը տեղափոխվեց բնակարանի ննջասենյակ, որից հետո անջատվեցին բնակարանի լույսերը և պատահական ընտրությամբ՝ ժամը 21:55-ին ներս հրավիրվեց «Եփրեմյան Դավիթ» ԱՁ -ի աշխատակից Վաչագան Սաշայի Թադևոսյանը, ով կանգնեց բնակարանի խոհանոցում՝ կամարածն բացվածքի կողքին, որից հետո հյուրասենյակ հրավիրվեց Ցիալա Աղաջանյանը, ով, հասնելով խոհանոցը և հյուրասենյակը բաժանող բացվածքից 1.5մ հեռավորության վրա, միանգամից հայտնեց, որ խոհանոցում՝ խոհանոց տանող բացվածքի կողքին, կանգնած է իր հետ նույն՝ «Եփրեմյան Դավիթ» ԱՁ-ում աշխատող Վաչագանը, որի ազգանունը չի հիշում»:

Չննություն քննչական գործողությունն իրենից ենթադրում է իրավասու սուբյեկտների կողմից տարբեր օբյեկտների անմիջական ուսումնասիրություն՝ ենթադրյալ հանցագործության մասին տվյալներ ստանալու և քրեական գործով վարույթի ընթացքում դրանք հետազայում օգտագործելու նպատակով: Օրենսդիրը սահմանել է, որ զննության նպատակը վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքներ պարզելը, հանցագործության հետքերը, այլ նյութական օբյեկտները հայտնաբերելն է:

Սակայն չպետք է զննություն քննչական գործողության սահմաններն այնքան ընդլայնվեն, որ դրա ընթացքում կատարվեն այնպիսի գործողություններ, որոնք

բնորոշ են միանգամայն այլ քննչական գործողությունների էությանը:

Դատարանը սույն գործով իրավացիորեն նշել է, որ մեջբերված հատվածից բխում է, որ դեպքի վայրի զննության ժամանակ իրավասու մարմինը դուրս է եկել այդ քննչական գործողության սահմաններից և ձեռնարկել է այնպիսի միջոցառում, որը բնորոշ է մեկ այլ՝ քննչական փորձարարություն քննչական գործողությանը: Ընդ որում, դատարանը գտել է նաև, որ թեև դեպքի վայրի զննության արձանագրության համաձայն՝ կատարվել են նաև դեպքի վայրի զննության բովանդակությանը համարժեք գործողություններ, սակայն պետք է կատարվածը դիտարկել ամբողջության մեջ: Այլ կերպ ասած՝ անթույլատրելի է դեպքի վայրի զննության արձանագրությունից բացառել միայն խնդրահարույց հատվածները՝ մնացած մասով գործողությունը դիտարկելով որպես թույլատրելի: Հակառակ պարագայում՝ քրեական հետապնդման մարմինները կստանան հայեցողական գործողությունների կատարման լայն հնարավորություն, և հնարավոր կլինի մեկ մոտեցմամբ կատարել մի շարք քննչական գործողությունների բովանդակությունից բխող միջոցառումներ, կազմել մեկ ամփոփ փաստաթուղթ, որից հետո, ըստ հարմարության, ընդհանուրից առանձնացնել հատվածներ: Նման պայմաններում կխաթարվի օրինականության սկզբունքը և պաշտոնատար անձանց կողմից միայն օրենսդրորեն սահմանված գործողություններ կատարելու սահմանադրական և քրեադատավարական պահանջը կդառնա առարկայազուրկ:

Մեր կարծիքով, տվյալ դեպքում քննիչի գործողությունները միտված են եղել պարզելու, թե արդյոք համանման պայմաններում տուժողը կարող էր տեսնել բնակարանի համապատասխան հատվածում գտնվող անձի դեմքը, որն իրենից ենթադրում է առավելապես հետազոտական, քան հանցագործության հետքեր կամ այլ իրեղեն ապացույցներ հայտնաբերելուն ուղղված գործողություն: Ուստի սույն դեպքում քննիչի կողմից խախտվել են զննություն քննչական գործողության կատարման կարգն ու էությունը, քանի որ դրա ընթացքում կատարվել են այլ քննչական գործողության բովանդակությունը կազմող գործողություններ:

Միևնույն ժամանակ, հարկ ենք համարում փաստել, որ 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը նմանատիպ իրավիճակների վերաբերյալ այլ մոտեցում է որդեգրել:

Այսպես, նոր օրենսգրքի 97-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Օրենքի էական խախտմամբ ստացված են համարվում այն տվյալները, որոնք ձեռք են բերվել՝

3) սույն օրենսգրքով նախատեսված ընթացակարգի խախտմամբ, եթե հնարավոր չէ դրա հետևանքը վերացնել այլ ապացուցողական գործողության պատշաճ կատարմամբ»:

Այսինքն ստացվում է, որ օրենսդիրը ձերբազատվել է չափազանց ֆորմալ, ձևական մոտեցումից, և ապացուցողական /քննչական կամ դատավարական/ գործողության կարգի խախտումը չի դիտել որպես միանշանակ հիմք՝ դրա արդյունքում ձեռքբերված ապացույցն անթույլատրելի ճանաչելու համար: Այլ կերպ՝ այն դեպքերում, երբ փաստական տվյալի ձեռքբերման ընթացակարգի

խախտման հետևանքը հնարավոր է վերացնել այլ ապացուցողական գործողության պատշաճ կատարմամբ, ապա այդպիսի խախտումը չի համարվի էական և չի հանգեցնի ձեռք բերված տվյալների անթույլատրելիության:

Կարծում ենք, որ նման մոտեցումը ողջունելի է, քանի որ այն ոչ միայն բեռնաթափել է ապացուցման գործընթացը չափազանց ձևական կարգավորումներից, այլև վարույթ իրականացնող մարմինն հնարավորություն է տվել օրինական ընթացակարգի, այն է՝ այլ ապացուցողական գործողության պատշաճ կատարման միջոցով ուղղել վարույթի ընթացքում թույլ տված ոչ կոպիտ սխալները և չկորցնել վարույթի համար առանցքային նշանակություն ունեցող ապացույցները:

Հետևաբար կարծում ենք, որ քննարկվող գործով թեև թույլ է տրվել դեպքի վայրի զննություն քննչական գործողության ընթացակարգային խախտում, այնուամենայնիվ, այն կարող է չհամարվել էական, քանի որ դրա հետևանքները վարույթ իրականացնող մարմինը կարող էր վերացնել այլ գործողության՝ սույն դեպքում քննչական փորձարարության պատշաճ կատարմամբ:

Միևնույն ժամանակ, գտնում ենք, որ նշվածը պետք է քննարկման առարկա դարձնել՝ ելնելով յուրաքանչյուր գործի առանձնահատկություններից և փաստական հանգամանքներից, քանի որ չի բացառվում, որ նման կարգավորումը հանգեցնի վարույթ իրականացնող մարմնի կողմից թույլ տրված չարաշահումների, որոնք նշվել էին քննարկվող գործում դատարանի կողմից: Բացի այդ, պետք է արձանագրել, որ ապացուցողական գործողությունների տարանջատումն ինքնանպատակ չէ, այն ուղղված է անձի պաշտպանության իրավունքի իրացման պատշաճ ապահովմանը՝ կապված յուրաքանչյուր ապացուցողական գործողության ընթացքի և հետևանքի վերաբերյալ վերջինիս դիրքորոշման հետ: Հետևաբար մի ապացուցողական գործողության ընթացքում մեկ այլ գործողության էությանը բնորոշ գործողությունների կատարումը թեև որոշ դեպքերում կարող է օրենսդրական առումով չհամարվել էական խախտում, այնուամենայնիվ նման իրավիճակները պետք է ուսումնասիրել նաև վարույթի մասնավոր մասնակցի լեգիտիմ շահերի պաշտպանության ապահովվածության տեսանկյունից՝ առավելապես քննարկելով ձևակերպված վարութային ակտերի որոշակիությունը և կանխատեսելիությունը վերջինիս համար:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածն ամրագրում է.

«Քրեական վարույթի ընթացքում հավաքված ապացույցները ենթակա են պատշաճ ստուգման՝ ստացված ապացույցի ձևի և բովանդակության վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ստացման աղբյուրները վերհանելու միջոցով»:

Նշվածի համատեքստում առաջ է գալիս ապացուցման երկրորդ տարրը՝ հավաքված ապացույցների և դրանց աղբյուրների ստուգումը: Այն ենթադրում է յուրաքանչյուր ապացույցի և դրա ստացման աղբյուրի մանրամասն ուսումնասիրություն՝ դրա ամրագրման կամ նոր ապացույցների ստացման արդյունքում դրա հերքման, ինչպես նաև դրա «բարորակության» պարզման նպատակով գործով ձեռք բերված բոլոր ապացույցների համակցության մեջ համեմատելու

եղանակով: Ապացույցների ստուգումը պարտադիր իրականացվում է քրեական վարույթի ամբողջ ընթացքում՝ պարբերաբար, գործով անցնող ցանկացած ապացույցի և դրա ստացման աղբյուրի նկատմամբ: Մինևույն ժամանակ վարույթի տարբեր փուլերում ապացույցների ստուգումը կարող է ունենալ որոշակի առանձնահատկություններ, օրինակ՝ դատական վարույթում ապացույցների ստուգումը ոչ միշտ է իրականացվում նոր ապացույցների կամ դրանց ստացման աղբյուրների ձեռքբերման եղանակով, սակայն ընդհանուր առմամբ ՀՀ քրեական դատավարությունում չկա վարույթի այնպիսի փուլ, որի ընթացքում որևէ ապացույց համարվի նախապես հավաստի և չենթարկվի մանրամասն ստուգման:

Քրեադատավարական ապացուցման հաջորդ տարրը ձեռք բերված ապացույցների գնահատումն է, որը, ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի՝ իրականացվում է դրանց վերաբերելիության, թույլատրելիության, հավաստիության, իսկ բոլոր ապացույցների համակցությունը՝ հիմնավոր եզրափակիչ դատավարական ակտ կայացնելու համար բավարարության տեսանկյունից: Այսինքն՝ ապացույցի գնահատումը դրա «բարորակության» վերաբերյալ վերջնական հետևության հանգեին է, որը ենթադրում է դրա վերաբերելիության, թույլատրելիության, հավաստիության, եզրափակիչ դատավարական ակտ կայացնելու համար բավարարության, ինչպես նաև ապացուցման ենթական փաստական հանգամանքների հաստատման կամ հերքման համար դրա ունեցած նշանակության և այլ առանցքային հատկանիշների վերհանում:

Այսպիսով, վերոնշյալ ապացուցման տարրերը սերտորեն փոխկապակցված են միմյանց հետ: Մինևույն ապացուցողական գործողության ընթացքում միաժամանակ կարող են հանդիպել դրա մի քանի տարրեր՝ տարբեր համակցություններով: Հենց այդպիսի հարաբերակցության շնորհիվ է, որ ապացուցման բոլոր տարրերը հանդես են գալիս որպես մեկ անբաժանելի միություն և տալիս են ապացուցման բարդ բովանդակության մասին անհրաժեշտ պատկերացումը:

Անդրադառնալով ապացուցման նպատակին՝ հարկ է նշել, որ տեսության մեջ բացակայում է դրա վերաբերյալ միանշանակ տեսակետը: Երկար ժամանակ ապացուցման նպատակը հանդիսացել է ճշմարտության բացահայտումը, սակայն վեճերի առիթ է տվել այն հանգամանքը, թե խոսքը օբյեկտիվ, թե ձևական կամ դատավարական ճշմարտությանն է վերաբերում:

Օբյեկտիվ ճշմարտության կառուցակարգին և ինկվիզիցիոն դատավարության ձևին բնորոշ է ապացուցման գործընթացում դատարանի ակտիվ դերը, որը դրսևորվում է դատարանի կողմից ակտիվ կերպով սեփական նախաձեռնությամբ նոր ապացույցներ ձեռք բերելով, գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելով, մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելու պայմաններում դատական վարույթը շարունակելով և այլն:

Օբյեկտիվ ճշմարտության կատեգորիային հակադրվում է դատավարական կամ ձևական ճշմարտությունը, որը հիմնականում ենթադրում է այնպիսի ճշմարտություն, որն ի սկզբանե համապատասխանում է օրենսդրությամբ նախապես սահմանված պահանջներին, կամ գործի լուծման հետ կապված այս կամ այն

վերջնական հետևության վերաբերյալ դատավարության կողմերի համաձայնությանը: Այսպիսի կառուցակարգը, ի տարբերություն նախորդին, առավելապես բնորոշ է մրցակցային դատավարությանը, որի պայմաններում վարույթը հիմնված է ոչ թե հանրային կամքի, այլ դատավարությունը որպես հանրային կամ մասնավոր շահերի պաշտպանության լեգիտիմ միջոց օգտագործող կողմերի ջանքերի և կամքի վրա:

Դատավարական կամ ձևական ճշմարտությունը, ինչպես նշեցինք, համապատասխանում է կամ օրենքով նախապես սահմանված պահանջներին կամ կողմերի այնպիսի համաձայնությանը, որով վերջիններս ընդունում են վարութային այս կամ այն վերջնական որոշումը որպես ճշմարիտ և այլևս չեն պահանջում ապացուցման առարկա հանդիսացող փաստական հանգամանքների պարզում: Ընդ որում՝ դատարանի, դատախազի կամ քննիչի նման որոշման հիմքում դրված հետևությունները կարող են լինել ինչպես ճշմարիտ, այսինքն՝ համապատասխանել օբյեկտիվ ճշմարտությանը, այնպես էլ համարվել ապացուցված միայն որոշակի աստիճանով:

Դատավարական կամ ձևական ճշմարտության կատեգորիան ապացուցման բեռը դնում է կողմերի վրա, իսկ դատարանը միայն ապահովում է գործի մրցակցային քննությունը՝ տալով կողմերին հավասար պայմաններ առկա ապացույցների հետազոտման և նոր ապացույցների ձեռքբերման համար: Մրցակցային դատավարությունում դատարանն իրավունք չունի սեփական նախաձեռնությամբ պահանջել լրացուցիչ ապացույցներ, ուղարկել գործը լրացուցիչ նախաքննության և դուրս գալ կողմերի պահանջների սահմաններից: Վերջնական որոշում կայացնելիս դատարանը կարող է հիմնվել միայն այն ապացույցների վրա, որոնք ներկայացրել են կողմերը և որոնք օբյեկտիվ գնահատման են ենթարկվել: Հետևաբար, եթե որևէ կողմ իր դիրքորոշումը չի կարողացել ապացուցել կամ ամբողջությամբ չի օգտվել իր դատավարական իրավունքներից, դատարանը որոշումը կայացնում է հոգուտ այն կողմի, որն ավելի փաստարկված է հիմնավորել ապացուցման ենթակա փաստական հանգամանքների վերաբերյալ իր դիրքորոշումը:

Նշվածի համատեքստում պետք է փաստել, որ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքին առավելապես դատավարության մրցակցային ձևն է բնորոշ՝ որոշ վերապահումներով: Մասնավորապես, չնայած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածով ամրագրվում է կողմերի մրցակցության սկզբունքը, այնուամենայնիվ դատարանը զրկված չէ սեփական նախաձեռնությամբ ապացույցներ ձեռք բերելու իրավունքից, մասնավորապես՝ կարող է սեփական նախաձեռնությամբ դատական վարույթում նշանակել փորձաքննություն, հարցաքննել վկաներին և այլն:

Պետք է փաստել, որ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգիրքը որպես ապացուցման նպատակ սահմանում է ապացուցման ենթակա փաստական հանգամանքները, ինչպես նաև վարույթի համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները հաստատելը կամ հերքելը:

Ընդ որում՝ անդրադառնալով նշված ճշմարտության բացարձակ կամ հարաբերական բնույթին, կարծում ենք, որ օրենսգրքի 102-րդ հոդվածով նախատեսվող և ապացուցման առարկա հանդիսացող փաստական հանգամանքների, ինչպես նաև վարույթի համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների հաստատումը կամ հերքումը, իսկապես, պետք է կատարվի հնարավորինս լրիվությամբ, այսինքն՝ ձգտելով դրանց վերաբերյալ բացարձակ ճշմարտության: Ինչ վերաբերում է վարույթին առնչվող այլ հանգամանքներին, ապա դրանք կարող են հաստատվել կամ հերքվել որոշակի, հարաբերական աստիճանով:

Միևնույն ժամանակ, ուսումնասիրելով ՀՀ քրեական դատավարության օրենսդրության զարգացման միտումները, և մասնավորապես ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգիրքը՝ կարող ենք փաստել, որ դրանում նկատվում է նաև դատավարական ճշմարտության հայեցակարգի ներդնումը: Մասնավորապես, խոսքը վերաբերում է համաձայնեցման և համագործակցության վարույթներին, պարզեցված նախաքննությանը, գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտից հրաժարմանը, մեղադրական դատավճռի հիմքում դրվող յուրաքանչյուր փաստական հանգամանքի ապացույցների այնպիսի ծավալով հիմնավորվածությանը, որը կբացառի դրա ապացուցվածության վերաբերյալ ցանկացած հիմնավոր կասկած (ՀՀ ՔրՕ- 22-րդ հոդված) և այլն:

§2. Ապացուցման առարկան և սահմանները ՀՀ քրեական դատավարությունում

Ապացուցման առարկա ասելով հիմնականում հասկանում ենք վարույթի համար նշանակություն ունեցող այն հանգամանքների համակցությունը, որոնք հաստատվում կամ հերքվում են ապացույցներ հավաքելու, ստուգելու և գնահատելու միջոցով: Այդ հանգամանքներն ամրագրված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածով:

Վերոնշյալ հոդվածով նախատեսված յուրաքանչյուր հանգամանք կարող է ինչպես հաստատվել, այնպես էլ հերքվել: Որոշ դեպքերում վարույթի համար նշանակություն ունեցող մի հանգամանքի հերքումը կարող է իրականացվել մեկ այլ՝ վերջինիս բացառող հանգամանքի հաստատման միջոցով: Նմանատիպ դեպքի վառ օրինակ է անձի այլուրեքությունը, մասնավորապես՝ անձի բացակայությունը կոնկրետ վայրում կոնկրետ պահին ամենից հաճախ ապացուցվում է մեկ այլ վայրում այդ նույն պահին նրա ներկայության հաստատման շնորհիվ:

Ապացուցման առարկայի ամբողջական ուսումնասիրության համար կարևոր է նաև հասկանալ, թե արդյոք այն նույնն է վարույթի բոլոր փուլերի և ցանկացած հանցակազմի համար: Մեր կարծիքով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածով նախատեսված՝ ապացուցման առարկայի ընդհանուր բովանդակությունը և կառուցվածքը վերաբերում են բոլոր տեսակի վարույթներին և ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսված՝ բոլոր հանցակազմներին: Այլ խոսքով՝ ապացուցման առարկան չի կարող սահմանվել քննիչի կամ դատարանի հայեցողությամբ, քանի որ այն a priori ամրագրված է օրենքով: Սակայն դա դեռևս

չի նշանակում, որ ապացուցման ենթակա հանգամանքների շրջանակը չի կարող ավելի լայնացվել, քանի որ հնարավոր են իրավիճակներ, երբ անհրաժեշտ է վերհանել քննության ենթարկվող արարքի իրավական նշանակություն ունեցող բոլոր հատկանիշները և դրա հիման վրա մանրակրկիտ ուսումնասիրության ենթարկել կոնկրետ վարույթի բոլոր հանգամանքները՝ ինչպես առանձին, այնպես էլ որպես համակցություն:

Հետևաբար այս առումով համակարծիք ենք ՀՀ Վճռաբեկ դատարանի արտահայտած այն դիրքորոշման հետ, որ չնայած նշված հանգամանքներն իրենց ամբողջության մեջ կազմում են ապացուցման առարկան, որն օրենքում ձևակերպված է ընդհանուր տեսքով և կիրառելի է բոլոր տեսակի հանցագործությունների համար, դրա հետ մեկտեղ, սակայն, ապացուցման առարկայի՝ օրենքում ամրագրված տիպական թվարկումը յուրաքանչյուր գործով ճշգրտվում և լրացվում է հանցագործության քրեաիրավական որակմանը համապատասխան: Սա նշանակում է, որ կատարված իրադարձությունը, ինչպես ամբողջությամբ, այնպես էլ նրա յուրաքանչյուր հանգամանքը առանձին վերցված, յուրաքանչյուր դեպքում պետք է հետազոտել՝ հաշվի առնելով քրեական օրենքով նախատեսված կոնկրետ հանցակազմի հատկանիշները:³

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի համաձայն՝ ապացուցման ենթակա առաջինը հանգամանքը դեպքն է և դրա հանգամանքները՝ ժամանակը, տեղը, եղանակը և այլն: Դրանք առաջին հերթին հանցագործության օբյեկտիվ հատկանիշներն են, այն է՝ հանցագործության օբյեկտը և օբյեկտիվ կողմը: Դեպքը և դրա հանգամանքները ապացուցելու համար անհրաժեշտ է նախ պարզել, թե տեղի ունեցել է արդյոք արարքը, որի կապակցությամբ նախաձեռնվել է քրեական վարույթ և որի կատարման մեջ անձը մեղադրվում է, այնուհետև վերհանել այդ արարքի այն հատկանիշները, որոնք թույլ են տալիս այն համարել հանցագործություն:

Ինչ վերաբերում է դեպքի տեղին և ժամանակին, ապա դրանք ոչ միշտ են հանդիսանում կոնկրետ հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող պարտադիր հատկանիշներ՝ օրինակ սպանության հանցակազմի օբյեկտիվ կողմի համար դրանք պարտադիր չեն, սակայն ապօրինի որսի համար, ի թիվս այլնի, էական է, թե արարքը արգելված վայրում է կատարվել, թե ոչ: Սակայն անկախ նրանից, դրանք հանդիսանում են հանցակազմի պարտադիր հատկանիշ, թե ոչ, բոլոր տեսակի վարույթներով դեպքի տեղը և ժամանակը ենթակա են պարզման, քանի որ դրանք որոշակիացնում են արարքը, թույլ են տալիս տարանջատել նմանատիպ արարքները, հաստատել կամ հերքել անձի այլուրեքությունը և այլն: Բացի այդ, դեպքի տեղը թույլ է տալիս կարգավորել վարույթի ընդդատությունը, իսկ դեպքի ժամանակը պարզելը առանցքային է արարքի վաղեմության ժամկետների որոշման համար և այլն:

Ենթադրյալ հանցանք կատարելու մեջ մեղադրյալի մեղավորությունը մտնում է

³ ԵԷԴ/0058/01/10 գործով Սիրակ Շավարշի Սաքանյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի որոշում

հանցակազմի սուբյեկտիվ կողմի մեջ: Անձի մեղավորությունը քրեական օրենքի իմաստով մեղքի հասկացությունից տարբերվում է, քանի որ այն ներառում է ոչ միայն դիտավորության կամ անզգուշության առկայությունը, այլև արարքի օբյեկտիվ կողմը կազմող գործողությունները կոնկրետ անձի կողմից կատարված լինելու փաստը:

Անձի մեղքի, այսինքն՝ կատարված արարքի նկատմամբ վերջինիս հոգեբանական վերաբերմունքի պարզումն ամենաբարդն է տրվում ապացուցման գործընթացում: Այդ պատճառով հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարզման հետ կապված սխալները գործնականում ամենից հաճախ են պատահում:

Հարկ ենք համարում նշել նաև, որ հաճախ ենթադրյալ հանցանքի մեջ անձի մեղքի՝ մասնավորապես նրա դիտավորության կամ անմեղության հաստատումն ուղղակիորեն կախված է արարքի օբյեկտիվ կողմը կազմող հատկանիշների վերհանումից: Այդպես, օրինակ Սամվել Հունիկյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հանցավորի դիտավորության ուղղվածության մասին հարցը լուծելիս անհրաժեշտ է ելնել հանցագործության բոլոր հանգամանքների համակցությունից և հաշվի առնել, մասնավորապես, հանցագործության եղանակը և գործիքը, մարմնական վնասվածքների քանակը, բնույթը և տեղակայումը (օրինակ՝ մարդու կենսականորեն կարևոր օրգանների վնասումը), ինչպես նաև հանցավորի և տուժողի վարքագիծը հանցագործությանը նախորդող և հաջորդող պահերին, նրանց փոխհարաբերությունները, հանցավորի կողմից հանցավոր գործողությունների դադարեցման պատճառները և այլն: Արդյունքում վերլուծելով կոնկրետ գործով վերոնշյալ հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ նախաքննության մարմինը և դատարանները պատշաճ գնահատման չեն ենթարկել Ս.Հունիկյանի արարքի ճիշտ որակման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները: Ուստի դատարանի հետևություններն այն մասին, որ դատապարտյալը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն, չիկարելի ճանաչել հիմնավորված:⁴

Ի տարբերություն 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը ընդլայնել է պարտադիր ապացուցման ենթակա հանգամանքների շրջանակը, դրանում ներառելով նաև մեղադրյալի անձը բնութագրող հանգամանքները, ենթադրյալ հանցագործությամբ պատճառված վնասը և այն հանգամանքները, որոնք թույլ են տալիս անձին ազատել քրեական պատասխանատվությունից կամ պատժից:

Առաջին երկուսը կարծում ենք պարզ են: Ինչ վերաբերում է այն հանգամանքներին, որոնք թույլ են տալիս անձին ազատել քրեական պատասխանատվությունից և պատժից, ապա դրանք նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի 4-րդ բաժնում: Դրանց թվում են քրեական պատասխանատվությունից ազատելը կամովին հրաժարվելու, գործուն զոջալու, վաղեմության ժամկետներն անցնելու

⁴ Թիվ ՎԲ-11/08 Սամվել Գրիգորի Հունիկյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2008 թվականի փետրվարի 29-ի որոշում

հետևանքով և այլն: Նման հանգամանքների հաստատման դեպքում վարույթ իրականացնող մարմինը, ՀՀ քրեական դատավարության 12-րդ հոդվածի 12-րդ կետի համաձայն՝ պարտավոր է չհարուցել քրեական հետապնդում կամ դադարեցնել հարուցված քրեական հետապնդումը:

Ապացուցման առարկայի հետ կապված հետաքրքիր է նաև արտասահմանյան երկրների օրենսդրությունների ուսումնասիրությունը, այն առումով, որ հետխորհրդային երկրների քրեական դատավարության օրենսգրքերում ապացուցման ենթակա հանգամանքները գրեթե նույնությամբ կրկնում են մեր քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածով նախատեսված հանգամանքները: Մինչդեռ օրինակ Դանիայի քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ ապացուցման ենթակա են միայն հանցանքի տեղը, ժամանակը, եղանակը և մյուս հանգամանքները, հանցակազմի տարրերը, անձի մեղավորությունը կատարած արարքին և վերջինիս բնութագրող հանգամանքները:⁵ Իսկ օրինակ ԱՄՆ-ի ընդհանուր դաշնային օրենքների համաձայն՝ ապացուցման ենթակա են այն փաստերը, որոն կազմում են հանցակազմի տարրերը, ակտուս ռեուս (գործողություն կամ անգործություն), մենս ռեա (մեղավորություն), հանցանքի առարկան (գույք, անձ և այլն), պատճառահետևանքային կապը, մեղադրողի և ամբաստանյալի պաշտպանական փաստարկները (օր.՝ ալիբի, ինքնապաշտպանություն, անհրաժեշտություն), քրեական պատասխանատվության բացառման, մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքները, պատժի չափին առնչվող հանգամանքները:⁶

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 2-րդ մասը նույնպես նորություն է: Նշվում է, որ օրենսգրքով նախատեսված վարույթի առանձին տեսակների համար կարող է սահմանվել ապացուցման ենթակա հանգամանքների այլ շրջանակ:

Ասվածը վերաբերում է օրինակ անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթով ապացուցման ենթակա հանգամանքներին, որոնք նախատեսված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 410-րդ հոդվածով: Կամ օրինակ 421-րդ հոդվածով նախատեսվում են բժշկական հարկադրանքի վարույթով ապացուցման ենթակա հանգամանքները:

ՀՀ քրեական դատավարությունում օրենսդրությամբ ուղղակի ամրացված է եղել միայն անմեղության կանխավարկածի օրենսդրական բնորոշումը, իսկ մի շարք այլ կանխավարկածներ, թեև գիտության մեջ քննարկվել և վերլուծվել են, սակայն օրենսդրական ամրագրում չեն ստացել: ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի 106-րդ հոդվածում առաջին անգամ համակարգված կերպով ամրագրվեց իրավական կանխավարկածների վերաբերյալ դրույթը: Քննարկվող հոդվածն առավելապես փոխառվել է Լատվիայի քրեական դատավարության օրենսգրքից, որի 125-րդ հոդվածն ամրագրում է փաստի իրավական կանխա-

⁵ Danish Criminal Code. Order No. 909 of September 27, 2005, as amended by Act Nos. 1389 and 1400 of December 21, 2005

⁶ St'u Federal rules of criminal procedure; Title 18 U.S. Code

վարկածը:⁷

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 106-րդ հոդվածի համաձայն՝

«1. Եթե քրեական վարույթի ընթացքում հակառակը չի ապացուցվում, ապա ապացուցված են համարվում՝ /.../

4) փաստը, որը մեղադրյալին հայտնի է կամ պետք է հայտնի լիներ՝ որպես նրա բացառիկ իրազեկության հանգամանք:

2. Եթե վարույթի մասնակիցը վիճարկում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված փաստերի հավաստիությունը, ապա կրում է հակառակն ապացուցելու պարտականությունը:»:

Իրավական կանխավարկածը իրավաբանական փաստի առկայության կամ բացակայության մասին նորմատիվ բնույթի ենթադրություն (մտահանգում) է, որն ունի հավանականության բարձր աստիճան և ենթակա չէ ապացուցման: Քրեական դատավարությունում իրավական կանխավարկածներն ունեն կարևոր նշանակություն. մասնավորապես դրանք նպաստում են քրեական արդարադատության արդյունավետության բարձրացմանը: Այսպես, իրավական կանխավարկածը տեղեկատվության պակասի պայմաններում իրականացող իրավակիրառմանը հաղորդում է որոշակիություն, լրացնում է փաստի վերաբերյալ տեղեկատվության բացը, ապահովում է վարույթի ողջամիտ ժամկետում իրականացնելու պահանջի իրականացումը: Բանն այն է, որ այս կամ այն փաստի առկայության կամ բացակայության մասին նորմատիվ ենթադրությունը ինքնին լրացնում է այդ փաստի մասին տեղեկատվության պակասը, ինչպես նաև վարույթն իրականացնողին ազատում է իրավաբանական փաստի հաստատման կամ հերքման ուղղությամբ լրացուցիչ ապացուցողական գործողություններ կատարելու պարտականությունից:⁸

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածով նախատեսված իրավական կանխավարկածներից մեր կարծիքով առավել հետաքրքրություն է ներկայացնում փաստը, որը մեղադրյալին հայտնի է կամ պետք է հայտնի լիներ՝ որպես նրա բացառիկ իրազեկության հանգամանք:

Այսպես, ժամանակակից դատավարական իրավունքի զարգացման ներկայիս պայմաններում ապացուցման պարտականության բաշխման խնդիրը ընկալվում է փոքր-ինչ այլ կերպ. ներկայիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումներով թույլատրելի է համարվում առանձին փաստերի ապացուցման պարտականությունը մեղադրյալի վրա դնելը:

Անհրաժեշտ է քննարկել այն հարցադրումը, թե արդյոք առանձին փաստերի ապացուցման պարտականությունը մեղադրյալի վրա դնելը չի հակասում Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական Կոնվենցիայի և Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին: Այսպես՝ Ֆամ Խոանցն

⁷<https://webcache.googleusercontent.com/search?q=cache:y393fj1CkVMJ:https://www.warnathgroup.com/wp-content/uploads/2015/03/Latvia-Criminal-Code.pdf&cd=1&hl=ru&ct=clnk&gl=am&client=firefox-b-d>

⁸Ա.Ղամբարյան- «Իրավական կանխավարկածները Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում»- 2014թ.- Երևան

ընդդեմ Ֆրանսիայի գործով Եվրոպական դատարանը գտավ, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը սկզբունքորեն չի բացառում ազգային օրենսդրությունում իրավական կամ փաստական կանխավարկածների գոյությունը, որոնց ապացուցման պարտականությունը դնում է մեղադրյալի վրա: Այնինչ, ցանկացած դրույթ, որը սահմանում է անմեղության ապացուցման պարտականության փոխանցում կամ հնարավոր է համարում մեղադրյալի դեմ գործող կանխավարկածի կիրառումը, պետք է սահմանափակված լինի բանական սահմաններով՝ հաշվի առնելով այն ամենի կարևորությունը, ինչը մեղադրյալի համար դրված է խաղասեղանին և ինչը ապահովում է նրա պաշտպանությունը:

Վերը նշված օրինակը, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության 106-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, ըստ մեզ, չեն նշանակում մեղավորության կանխավարկած, այսինքն՝ ապացուցման պարտականությունը մեղադրյալի վրա դնելը չի նշանակում, որ վերջինս համարվում է մեղավոր, քանի դեռ հակառակը չի ապացուցել:

Սկզբնական ապացուցման պարտականությունը միշտ էլ դրվում է քրեական հետապնդման մարմինների վրա: Խնդիրն այն է, որ նշված դեպքերում քրեական հետապնդման մարմինների կողմից հավաքված ապացույցները անուղղակի ապացույցներ են: Մեղադրանքը, ճիշտ է, հիմնված է միայն անուղղակի ապացույցների վրա, սակայն դրանց համակցությունն այնքան ծանրակշիռ է, որ հանգեցնում է մեղադրյալի մեղավորության վերաբերյալ եզրակացության: Այս պարագայում նման ապացույցների հերքման պարտականությունն արդեն մնում է մեղադրյալի վրա:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 106-րդ հոդվածով նախատեսված են հերքելի իրավական կանխավարկածներ, ինչը նշանակում է, որ նշված հոդվածում ամրագրված փաստերը համարվում են ապացուցված, քանի դեռ քրեական վարույթի ընթացքում հակառակը չի ապացուցվում: Եթե վարույթի մասնակիցը վիճարկում է նշված հոդվածի 1-ին մասով սահմանված փաստերի հավաստիությունը, ապա կրում է հակառակն ապացուցելու պարտականությունը:

Ապացուցման առարկա կամ ապացուցման ենթակա հանգամանքներ հասկացության հետ սերտորեն կապված է ապացուցման սահմաններ կամ ապացույցների բավարարություն հասկացությունը: Չի կարող լինել այնպիսի վարույթ, որի ընթացքում հանցագործության դեպքը չմտնի ապացուցման առարկայի մեջ: Չնայած դրան, հաճախ են հանդիպում իրավիճակներ, երբ օրինակ՝ սեքսուալ բնույթի բռնի գործողություն կատարելու մեջ մեղադրվող անձն արդարացվում է այն հիմքով, որ չի ապացուցվում արարքը՝ տուժած անձի կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով կատարած լինելու հանգամանքը, կամ օրինակ չի հաստատվում, որ պաշտոնատար անձի վրա դրված են եղել կոնկրետ ծառայողական պարտականություններ, որոնք վերջինս չի կատարել և այլն: Նման իրավիճակների պատճառը հիմնականում հանդիսանում է այն, որ նախաքննական մարմինը մակերեսորեն է ուսումնասիրում ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքը, հանցավոր արարքը չի մանրամասնեցվում, չպարզված են

մնում դրա բնույթը, կատարման իրադրությունը և այլ առանցքային տարրեր, ինչի արդյունքում քննությունը չի իրականացվում այն խորությամբ, որն անհրաժեշտ է ճշմարտության բացահայտման համար:

Մյուս կողմից, ապացուցման սահմանների առկայությունը վկայում է այն մասին, որ ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքը չպետք է ուսումնասիրվի դրա՝ առանց բացառության բոլոր դետալներով, այլ պետք է ուսումնասիրվի այն աստիճան խորությամբ, որ պարզվեն քրեական դատավարության նպատակների իրագործման համար առանցքային նշանակություն ունեցող դետալները: Եթե օրինակ վարույթը հարուցված է խուլիգանության դեպքի կապակցությամբ, պարտադիր չէ մանրամասն վերհանել բոլոր հայեցողականները կամ անպարկեշտ արտահայտությունները, բավարար է միայն պարզել հասարակության նկատմամբ անհարգալից կամ իրավական կամ բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունքի առավել էական դրսևորումները:

Ապացուցման սահմանների հասկացությունը հաջորդիվ ներառում է այն հարցը, թե ինչ ծավալով ապացույցներ պետք է հավաքվի, ստուգվի և գնահատվի, որպեսզի հաստատվի կամ հերքվի վարույթով ապացուցման ենթակա յուրաքանչյուր հանգամանք: Այլ խոսքով՝ այն ներառում է նաև այն ապացույցների համակցությունը, որն անհրաժեշտ է և բավարար է ապացուցման առարկա հանդիսացող հանգամանքների ապացուցված լինելու մասին հետևության հանգեցնելու համար:

Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը ընդգծել է, որ եթե ապացուցման առարկան ցույց է տալիս, թե ինչ է անհրաժեշտ պարզել յուրաքանչյուր քրեական գործով, ապա ապացույցների բավարարությունը կապված է այն ապացուցողական նյութի հետ, որը վերաբերում է ապացուցման առարկային և թույլ է տալիս այդ հանգամանքների մասին գալ արժանահավատ հետևության: Ապացույցների բավարարությունը ենթադրում է կոնկրետ գործով ապացուցման շրջանակների այնպիսի որոշումը, որպեսզի հավաքված ապացույցները որակական կողմից ապահովեն ապացուցման առարկայի յուրաքանչյուր տարրի պարզումը, իսկ քանակական կողմից՝ այդ հանգամանքների բացահայտման արժանահավատությունը և դատավարական որոշումների հիմնավորվածությունն ու պատճառաբանվածությունը: Ի տարբերություն ապացուցման առարկայի, ապացույցների բավարարություն հասկացության բովանդակությունը քրեական դատավարության օրենսդրությամբ բացահայտված չէ, այսինքն՝ օրենքում հստակ նշում չկա այն մասին, թե մինչև ե՞րբ պետք է հավաքվեն և հետազոտվեն ապացույցները, որպեսզի յուրաքանչյուր գործով պարզվի ապացուցման առարկան ամբողջությամբ կամ նրա տարրերն առանձին վերցրած: Բացի այդ, օրենքում սահմանված չէ միասնական չափանիշ առ այն, թե ե՞րբ են ի հայտ գալիս յուրաքանչյուր քրեական գործով ապացուցման առարկան բացահայտված համարելու հիմքերը:

Վճռաբեկ դատարանը արձանագրել է ապացույցների բավարարությունը որոշելու հետևյալ ընդհանուր չափանիշները՝

- 1) անմեղության կանխավարկածը,
- 2) վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունքը,
- 3) դատավարական որոշումների հիմնավորվածությունը և պատճառաբանվածությունը:⁹

Անդրադառնալով անմեղության կանխավարկածի սկզբունքին՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ քրեական դատավարությունում կանխավարկածը օրենքով կամ նախադեպային իրավունքով հաստատված այն կանոնն է, որի համաձայն՝ որոշակի հանգամանք համարվում է հաստատված, քանի դեռ օրենքով սահմանված կարգով չի ապացուցվել հակառակը: Մարդու անմեղությունը քրեական դատավարության կարևորագույն կանխավարկածներից է, որն ամրագրված է ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով և օրենքներով, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքով: Հանցանք կատարելու մեջ անձի մեղավորությունը հաստատված համարելը ոչ այլ ինչ է, քան անմեղության կանխավարկածի հաղթահարում: Միևնույն ժամանակ, անձին դատապարտելու համար համարժեք ապացույցների բավարար համակցության բացակայությունը նշանակում է, որ անձի անմեղության կանխավարկածը հաղթահարված չէ: Այլ խոսքով՝ քրեական դատավարության ընթացքում չապացուցված մեղավորությունը հավասարազոր է ապացուցված անմեղության:

Այսպիսով, անմեղության կանխավարկածի սկզբունքը ենթադրում է ապացույցների այնպիսի ամբողջության առկայություն, որն անհրաժեշտ է անձի մեղավորությունը ողջամիտ (հիմնավոր) կասկածից վեր ապացուցված համարելու, այլ ոչ թե անձի մեղավորության մասին ենթադրություններ անելու համար:¹⁰

Ապացույցների բավարարությունը որոշելու մյուս չափանիշին՝ ներքին համոզմունքին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Մ.Հովհաննիսյանի և Ա.Մարտիրոսյանի վերաբերյալ որոշման մեջ և դիրքորոշում ձևավորել այն մասին, որ ներքին համոզմունքը, որպես ապացույցների գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների անխզելի կապով. այն, մի կողմից, պետք է բխի հետազոտվող ապացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից, անկողմնակալ դիտորդի մոտ պետք է առաջացնի այն վստահությունը, որ ապացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ:

Ապացույցները, որոնք հավաքվել և ստուգվել են օրենքին համապատասխան, կազմում են ներքին համոզմունքի այն օբյեկտիվ հիմքը, որն իր դրսևորումն է գտնում ընդունվող որոշումներում: Թեպետ ապացույցների գնահատումը կատարվում է ներքին համոզման հիման վրա, այն չի կարող լինել կամայական: Դրա հիմքում պետք է դրված լինի գործի բոլոր հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և

⁹տե՛ս Սիրակ Սաքանյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0058/01/10 որոշման 17-րդ կետը:

¹⁰Տե՛ս Արարատ Ավագի Ավագյանի և Վահան Սերյոժայի Սահակյանի վերաբերյալ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի որոշումը:

բազմակողմանի քննությունը: (...)»:¹¹

Դատական ակտի պատճառաբանվածության հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Ֆ.Գալստյանի գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ պատճառաբանված որոշման բացակայությունն արդեն իսկ օբյեկտիվորեն սահմանափակում է վերադաս դատական ատյանի հնարավորությունը՝ լիարժեք դատական ստուգման ենթարկելու բողոքարկվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը և կայացնելու արդարացի որոշում, հետևաբար դատական ակտի չպատճառաբանված լինելը հանգեցնում է քրեական դատավարության կարևորագույն սկզբունքներից մեկի՝ ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքի խախտման:¹²

Այդպիսով, նշված նախադեպային որոշումներում կատարված իրավական վերլուծությունների հիման վրա Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործի լուծման համար ապացույցների բավարարությունը որոշելու չափանիշները սերտորեն փոխկապակցված են և փոխադարձաբար պայմանավորում են միմյանց: Գործի լուծման համար բավարար ապացույցներ ասելով՝ պետք է հասկանալ թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների համակցություն, որը, հաղթահարելով անմեղության կանխավարկածը, անաչառ դիտորդի մոտ կձևավորի հիմնավոր կասկածից վեր համոզվածություն անձի մեղավորության վերաբերյալ, ինչպես նաև կհաստատի գործով ապացուցման առարկան կազմող մյուս հանգամանքները և հնարավորություն կտա կայացնել հիմնավորված և պատճառաբանված որոշում:

Ս.Սաքանյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ քրեական դատավարությունում մեղքի հարցը լուծելիս որպես ապացույցների բավարարության շեմ պետք է գործի «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշը: Ընդ որում, «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշ ասելով, պետք է հասկանալ փաստական տվյալների (ապացույցների) այնպիսի համակցություն, որը բացառում է հակառակի ողջամիտ հավանականությունը: Վերոգրյալը չի նշանակում, որ հանցանք գործելու մեջ անձի մեղավորությունն ընդհանրապես չի կարող առաջացնել որևէ կասկած, սակայն այդպիսի կասկածի հավանականության դեպքում դրա աստիճանը պետք է լինի աննշան (խիստ ցածր): Այլ խոսքով՝ մեղադրանքը կազմող յուրաքանչյուր փաստական հանգամանք պետք է հիմնավորվի ապացույցների այնպիսի ծավալով, որը կբացառի դրա ապացուցվածության վերաբերյալ ցանկացած ողջամիտ կասկած: Նշվածի կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգիրքը որդեգրել է Վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումները և դրանք ամրագրել 22-րդ հոդվածով:

¹¹Տե՛ս Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Մարտիրոսյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵՔԴԴ/0632/01/08 որոշման 14-րդ կետը

¹²Ֆրունզիկ Գալստյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09 որոշման 18-20-րդ կետերը

Շատ քրեական վարույթներով, հատկապես նախաքննության սկզբնական փուլում, անհրաժեշտ է լինում ստուգել բազմաթիվ վարկածներ՝ համոզվելու համար որևէ հանգամանքի առկայությունը կամ բացակայությունը, նշանակությունը կամ աննշանությունը: Բայց օրենքը, քննիչի, դատավորի փորձը, հմտությունն ու գիտելիքները կարող են պատշաճ կողմնորոշում ապահովել գործի դժվարին իրավիճակներում, ճիշտ ուրվագծել ապացույցների առարկան և սահմանները և հասնել օբյեկտիվ ճշմարտության: Դա քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված խնդիրների բարեհաջող իրագործման բանալին է:

Եզրակացություն

Ապացուցման սահմանների և ապացույցների բավարարության համակցված վերլուծությունը քրեական դատավարության շրջանակում ցույց է տալիս, որ քրեական գործի արդար և օրինական լուծման հիմնական գրավականը ապացուցման գործընթացի ամբողջականությունն ու հիմնավորվածությունն է: Ապացուցման սահմանները ձևավորում են այն շրջանակը, որի ներսում պետք է բացահայտվեն գործի էական հանգամանքները, մինչդեռ ապացույցների բավարարությունը սահմանում է գնահատման չափանիշները՝ տվյալ հանգամանքներն ապացուցված համարելու համար: Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքը կարևոր նախադրյալ է դարձել ապացուցման գործընթացում որակական և քանակական չափանիշների հստակեցման համար՝ ընդգծելով անմեղության կանխավարկածի, ներքին համոզմունքի և դատավարական որոշումների հիմնավորվածության անբաժան դերակատարությունը:

Այս սկզբունքների համադրված կիրառմամբ է հնարավոր ապահովել ապացուցման գործընթացի օբյեկտիվությունը, մեղադրանքի լիարժեք հիմնավորվածությունը և արդար դատաքննության իրավունքի երաշխավորումը: Վերջին հաշվով, քրեական արդարադատության արդյունավետությունը պայմանավորված է նրանով, թե որքան կարող են վարույթն իրականացնող մարմինները ճշգրտորեն սահմանել ապացուցման առարկան, ապահովել ապացույցների համարժեք հավաքագրումն ու գնահատումը՝ հիմնավոր կասկածից վեր ապացուցման սահմանը հաղթահարելու նպատակով:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. ՀՀ Սահմանադրություն՝ փոփոխություններով և լրացումներով (2015թ.), ՀՀՊՏ
2015.12.21/ Հատուկ թողարկում Հոդ. 1118
Constitution of the Republic of Armenia with amendments and additions (2015), RA PBT 2015.12.21/Special issue Hod. 1118
2. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 01.07.1998թ., ստորագրվել է 01.09.1998թ., ուժի մեջ է մտել 12.01.1999թ., ՀՀՊՏ 1998.09.21/22(55)
Criminal Procedure Code of the Republic of Armenia, adopted on 01.07.1998, signed on 01.09.1998, came into force on 12.01.1999, RA PBT 1998.09.21/22(55)
3. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 30.06.2021թ., ուժի մեջ է մտել 01.07.2022թ.,
Criminal Procedure Code of the Republic of Armenia, adopted on 30.06.2021, came into force on 01.07.2022
4. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու/ԵՊՀ; Գլխ. խմբ.՝ Գ.Ս. Ղազինյան - Եր.:ԵՊՀ, 2016
Collection of materials of the scientific conference of the faculty of law of Yerevan State University / YSU; Chief editor: G.S. Ghazinyan - Yerevan: YSU, 2016
5. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Ընդհանուր մաս. (4-րդ հրատարակություն, լրացումներով եւ փոփոխություններով) / Ս. Դիլբանդյան, Ա. Հարությունյան, Գ. Ղազինյան եւ այլք. - ԵՊՀ հրատ., Երեւան, 2006
Criminal Procedure of the Republic of Armenia: General Part (4th edition, with additions and amendments) / S. Dilbandyan, A. Harutyunyan, G. Ghazinyan, et al. - YSU Publishing, Yerevan, 2006
6. Ա.Ղամբարյան- «Իրավական կանխավարկածները Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում»- 2014թ.- Երևան
Ghambaryan - "Legal Presumptions in the Criminal Procedure of the Republic of Armenia" - 2014, Yerevan
7. В. Я. Дорохов, В. С. Николаев. Обоснованность приговора. М., 1959, стр. 70—72;
V.Ya. Dorokhov, V.S. Nikolaev. The Reasonableness of the Verdict. Moscow, 1959, pp. 70-72
8. А. И. Трусов. Основы теории судебных доказательств. М., 1960;
A.I. Trusov. Fundamentals of the Theory of Judicial Evidence. Moscow, 1960
9. В. Н. Кудрявцев. Теоретические основы квалификации преступлений. М., 1963;
V.N. Kudryavtsev. Theoretical Foundations of Crime Classification. Moscow, 1963
10. Ф. Н. Фаткуллин. Обвинение и судебный приговор. Казань, 1965;
F.N. Fatkullin. Accusation and Judicial Verdict. Kazan, 1965

11. М.К.Свиридов. “Установление судом истины в судебном разбирательстве”. 1.11.2011

М.К. Sviridov. "Establishing the Truth in Court Proceedings". 01.11.2011

12. Левченко О. В. Система средств познавательной деятельности в доказывании по уголовным делам и ее совершенствование: Диссертация на соискание ученой степени доктора юридических наук. Астрахань, 2004

Levchenko O.V. The System of Cognitive Tools in Criminal Case Evidence and its Improvement: Dissertation for the degree of Doctor of Legal Sciences. Astrakhan, 2004

13. Ֆամ Խոանգն ընդդեմ Ֆրանսիայի՝ հետևյալ հղումով՝
<https://webcache.googleusercontent.com/search?q=cache:CgEIERkUyTII:https://hudoc.echr.coe.int/app/conversion/docx/%3Flibrary%3DECHR%26id%3D001-57791%26filename%3DCASE%2520OF%2520PHAM%2520HOANG%2520v.%2520FRANCE.docx%26logEvent%3DFalse&cd=1&hl=ru&ct=clnk&gl=am&client=firefox-b-d>

Fam Hoang v. France

Khaluhi Movsisyan

*Senior Prosecutor of the Prosecutor's Office of administrative districts
Kentron and Nork-Marash of Yerevan City*

PROOF IN CRIMINAL PROCEEDINGS¹³

Abstract

This work analyzes the concept of the limits of proof and the sufficiency of evidence in criminal procedure, based on the criminal procedural legislation, the precedential positions of the Court of Cassation, and the principles of fair trial. The limits of proof determine what facts must be clarified in a given case and what amount of evidence should be collected to substantiate those facts. The criteria for sufficiency of evidence, in turn, determine whether a fact is considered proven beyond reasonable doubt. The Court of Cassation has established three key criteria for assessing the sufficiency of evidence: the presumption of innocence, internal conviction, and the justification of procedural decisions. This work emphasizes the interconnection of these criteria and reveals that, for the resolution of a criminal case, a combination of admissible, relevant, and credible evidence is necessary, which will overcome the presumption of innocence and ensure the exercise of the right to a fair trial.

The aim of this work is to thoroughly study the issues of the limits of proof and sufficiency of evidence, while also addressing the questions of the relevance, credibility, and admissibility of evidence. The study is based on both key legal theoretical inquiries and the practice of the Court of Cassation, as well as current legislative provisions. The ultimate goal is to develop practical criteria that will contribute to the adoption of fair, reasoned, and trustworthy judicial decisions.

Keywords: proof; objective truth; procedural truth; elements of proof; stages of proof; purpose of proof; subject of proof.

¹³The article was presented on 05.05.2025 and was reviewed on 05.05.2025.

Халуи Мовсисян

*Старший прокурор прокуратуры административных округов
Кентрон и Норк-Мараш города Ереван*

ДОКАЗАТЕЛЬСТВО В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ¹⁴

Абстракт

В данной работе проанализированы концепции пределов доказательства и достаточности доказательств в уголовном процессе, основанные на уголовно-процессуальном законодательстве, прецедентных позициях Кассационного суда и принципах справедливого судебного разбирательства. Пределы доказательства определяют, какие факты должны быть установлены в конкретном деле и какой объем доказательств необходимо собрать для подтверждения этих фактов. Кассационный суд сформулировал три ключевых критерия для оценки достаточности доказательств: презумпция невиновности, внутреннее убеждение и обоснованность процессуальных решений. Работа подчеркивает взаимосвязь этих критериев и выявляет, что для решения уголовного дела необходима комбинация допустимых, релевантных и достоверных доказательств, которые смогут преодолеть презумпцию невиновности и обеспечить осуществление права на справедливое судебное разбирательство.

Цель данной работы — глубоко исследовать вопросы пределов доказательства и достаточности доказательств, одновременно рассматривая вопросы относимости, достоверности и допустимости доказательств. В основе исследования лежат как важнейшие вопросы юридической теории, так и практика Верховного Суда и действующие законодательные положения. Конечная цель заключается в разработке практических критериев, которые будут способствовать принятию справедливых, обоснованных и вызывающих доверие судебных решений.

Ключевые слова: доказательства; объективная истина; процессуальная истина; элементы доказательства; этапы доказательства; цель доказательства; предмет доказательства.

¹⁴Статья была представлена 05.05.2025 и прошла рецензирование 05.06.2025.